ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

56 տարեկան հասակում, ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, ս. թ. հուլիսի 28-ին հանկարծամահ եղավ Սովետական Հայաստանի խոշոր հնագետներից մեկը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի վարիչ Հարություն Արտաշեսի Մարտիրոսյանը։

Հ. Մարտիրոսյանը ծնվել է 1921 թ. մայիսի 1-ին Լենինականում, բանաստեղծ Արտաշես Տեր-Մարտիրոսյանի ընտանիքում։ 1938—1941 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում։ Հայրենական մեծ պատերազմի սկզբին, կիսատ թողնելով ուսումը, նա մեկնում է գործող բանակ և ակտիվորեն մասնակցում մարտական գործողություններին։ Հայրենական մեծ պատերազմից հետո ավարտելով համալսարանը Հ. Մարտիրոսյանը ընդունվում է ասպիրանտուրա (1948) և Լենինգրադում ուսանում սովետական ականավոր հնագետ ակադ. Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ։ 1951 թ. նա հաջողությամբ պաշտպանում է «Անդրկովկասի մշակույթը մ. թ. ա. 7—6-րդ դդ.» թեմայով թեկնածուական դիսերտացիան, իսկ 1965 թ. «Հայաստանը բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում» թեմայով դոկտորական դիսերտացիան։

Հ. Մարտիրոսյանն անցել է գիտական բեղմնավոր ուղի։ 1950 թ. սկսած նա պեղումներ է կատարել Գոլովինոյում, Կարմիր բլուրում, Գառնիում, Արմավիրում, հետախուզական աշխատանքներ է ծավալել Լենինականում, Գեղարոտում և այլուր։ 1968 թ. նա ղեկավարում էր ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի պեղումները, իսկ 1960 թ.՝ Գեղամա լեռների ժայռապատկերների ուսումնասիրության աշխատանքները։ Տաղանդավոր հնագետի գրչին են պատկանում հարյուրից ավելի գիտական աշխատություններ, որոնցից շուրջ տասը մենագրություններ են։

1951 թ. լույս է տեսնում Հ. Մարտիրոսյանի «Գոլովինոյի պեղումները» աշխատությունը, որում առաջին անգամ հատուկ ուսումնասիրության թեմա է դառնում մ. թ. ա. VII—VI դդ. Սովետական Հայաստանի տարածքի վրա ապրող ցեղերի մշակույթը։ Հասուն, բազմակողմանի զարգացած հնագետի մտքի արգասիքներից են «Թելշեբաինի քաղաքը» (1961) և «Արդիշտիխինիլի» (1974) աշխատությունները՝ նվիրված ուրարտական քաղաքների ուսումնասիրությանը։ Դրանք մի նոր փուլ են նշանավորում Հայկական լեռնաշխարհի հեռավոր բնակիչների արտադրական գործունեության, կենցաղի ու մշակույթի ուսումնասիրության պատմության մեջ։ Կովկասագիտության մարզում լուրջ ավանդ էր Հ. Մարտիրոսյանի «Հայաստանը բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում» կապիտալ աշխատությունը (1964), նվիրված տեղաբնիկների շուրջ երեք հազարամյա (մ. թ. ա. III—I հազ.) նյութական մշակույթի ժամանակագրությանը։ Պրոֆ. Հ. Մարտիրոսյանը հեղինակներից և խմբագիրներից մեկն էր «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր աշխատության առաջին հատորի։ Նրա գրչին են պատկանում նաև «Ուշ բրոնզի շրջանի բնակավայրերն ու դամբարանները», «Գեղամա լեռների ժայռապատկերները», «Հայաստանի նախնադարյան նշանագրերը» աշխատությունները։

Հ. Մարտիրոսյանի հետազոտությունները կարևոր ներդրում են Հայաստանի և Անդրկովկա-

սի հնագույն մշակույթի, Ուրարտուի պատմության ուսումնասիրության, ինչպես նաև հնագույն դարաշրջանների գիտական պարբերացման, դրանց սոցիալ-տնտեսական իմաստավորման և հին Արևելքի ժողովուրդների հետ Հայկական լեռնաշխարհի ու Կովկասի հնամենի ցեղերի ունեցած բազմապիսի փոխհարաբերությունների հետազոտման ասպարեզում։

Անխոնջ հնագետը լի էր ստեղծագործական մեծ եռանդով, նորանոր մտահղացումներով ու ծրագրերով։ Մահվանից ընդամենը մի քանի ամիս առաջ նա ավարտեց և հրատարակության հանձնեց «Գեղամա լեռների ժայռապատկերները» հնագիտական ժողովածուի երկրորդ հատորը և «Գիտությունն սկսվում է նախնագարից» գիտահանրամատչելի աշխատությունը։

Հ. Մարտիրոսյանի մահը մեծ և անդառնալի կորուստ է հայագիտության և կովկասագիտության համար ընդհանրապես։

Տաղանդավոր հնագետի, աղնիվ քաղաքացու և անզուգական ընկերոջ պայծառ հիշատակը վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում։

ԷՄՄԱ ԽԱՆՋԱԴՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու